297
L. I. 3

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԷ
R.T. MOURADIAN.
Athènes, Grèce.

ԴՐԱՄ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. ADÉLIS.
Poste restante.
Athènes, Grèce.

# ԱՊՏԱԿ

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 5 ֆր.
Կէս տարուան . . . 3 »
Մէկ թիւը . . . . ½ »

ՓՈՍՏԻ ԾԱԽՔԸ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ.

| Ա. ՏԱՐԻ | ԱԹԷՆՔ | ՄԱՐՏ | 1894 | ԹԻՒ 1 |

## ՄԵՐ ՑԵՂԱՓՈԽԻԿՆԵՐԸ




ԿԱԶԱՏԻ՛, ԿԱԶԱՏԻ՛ ՀԱՅԱՍՏԱՆԸ ... ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՊՍՏԱՄԲ Է ... ԹՈ՛Ղ, ԹՈ՛Ղ. ՈՐ ԱՀԵԳՆ ԱՂԷԿ ԱՂՕԹԷ ԽԱՐԽՈՒԼ ԳԱՀԻՆ ՎՐԱՅ ՆՍՏԱԾ ԱՆԲՈՒԺԵԼԻ ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴՈՒ ԱՅԼԵՒՍ ԿՈՐԱԾ ՀՈԳԻՈՅՆ ՀԱՄԱՐ :

## ԱՊՏԱԿ

Զանազան տեսակ ապտակներ կան. Ապտակ կայ որ վիրաւորուածը կը տայ վիրաւորողին. ապտակ կայ որ ամբարտաւանը ուղիղ կը բերէ. ապտակ կայ որ վատին համար վարձատրութիւն մ'է. ապտակ մ'ալ կայ որ դերասանները կը տան միմեանց բեմի վրայ:

Զէնքերու մէջ ապտակը ո՛չ միայն ինքնապաշտպանութեան գործիք մ'է, ո՛չ միայն վիրաւորելու միջոց մ'է, այլև երեսի մը վրայ նորա թողած հետքը, թէև անտեսանելի, կը մնայ անջնջելի, այլ և նորա բարոյական իմաստը համբոյրին ճիշ-ճիշդ հակառակն է:

Մենք՝ այդ բոլոր ապտակներէն ամէնէն նախամեծարելին կը համարինք վիրաւորուածին ապտակը, ապտա՛կ՝ որ հայութեան կողմէ կուզենք տալ նորա բանսարկուներին, որոնք իրենց հայրախնամ գթառատութեամբ, բարերար վարմունքներով, ծպտուն վայրենութեամբ և քաղցր բոլոր հայհոյանքներով այնքան կը վիրաւորեն անվերջ ապտակներով հայ ժողովուրդը:

Մեր ազգային ասպարէզին վրայ կան մարդիկ ալ, որոնք կարծես ներքին դրդումով մը միշտ ապտակ ստանալ կուզեն, և մենք հարկաւ կը ջանանք այնչափ բարի ըլլալ, որ այդպիսիներու ալ տանք ամօթոյ ապտակը:

Կան այնպիսի անձեր ալ, նորէն մեր ազգային ասպարէզին վրայ, որոնց բնաւորութեան գերիշխող յատկանիշներն են ամբարտաւանութիւնը ու իմաստակութիւնը. ապտակն այդպի-

սիների համար նոյնն է, ինչ որ պաղ ջուրը խելագարների գլխին:

Ամենայն յօժարութեամբ այդ դարմանն անելու դերը կուզէնք կատարել մենք: Չորրորդ տէսակի ապտակը, այն՝ որ վատերին իբրև վարձատրութիւն կը տան. նոյնպէս կարևոր զէնք մ՚է. Բայց անախորժ պաշտօն մ՚է այդպիսի ապտակ տալը, որովհետև տուողին ձեռքը կաղտոտի վատի երեսէն: Հինգերորդ կարգի ապտակը, դերասանների իրար տուած ապտակը՝ մասնաւոր մեծ փախանութիւնը կը կաղմէ այն ինքնագով, կեղծ, իրենց «ազգասէր ծախող» շաղակրատներին, որոնք դիմակաւորուած՝ դերասանութիւն կընեն «Հայկական խնդիր» խորագրով թատերգութեան մէջ:

Եւ մենք շուարած մնացած ենք թէ այդ ամէն անհրաժեշտ, սքանչելի, խորհրդաւոր ապտակներէն ո՞ր մէկը գործածենք: Ամէնը մէկտեղ գործածելու համար հինգ ձեռք պէտք է, մինչդեռ մենք, ինչպէս իւրաքանչիւր մարդ, ի հարկէ միայն երկու ձեռք ունինք և այդչափով մեր ապտակն այնքան ուժգին չէ կարող լինել: Խնդիր մ՚է այս: Սակայն կը կարծենք թէ ելքը պիտի գտնենք, եթէ ամէն մէկ ապտակն առանձին առանձին գործածելու ըլլինք: Տեսնենք:

Ընթերցողը թերևս զարմանայ թէ այս ինչ տարօրինակ և յանդուգն ցանկութիւն մ՚է տիրած մեզ, որ մեր ազգային ներկայ շփոթ վիճակին մէջ, մենք ապտակը կ՚ընտրենք մեզի զէնք մինչդեռ շատերը սուր կը պոռան և ոմանք դիւանագիտութիւն: Բայց ամէն մարդ ալ իր բնաւորութեան յատուկ դեր մը կը ստանձնէ.... Մենք միւսներէ համեստ ըլլալով, կուզէնք քէշ գործերը ապտակելը միայն մեզի զէնք ընել:

Այս թիւէն ուրեմն կը սկսինք հառուցանել մեր «ԱՊՏԱԿ»ին հինգ տեսակները և պատրաստել ապտակման մատուցարան մը այլ և այլ կարգի նուէրների համար մեր Բոնաւորներին, հայ մեծերին, հայ «գործիչ» ըսուածներին և այլն: Թէ ինչ պիտի առաջնորդէ մեզ՝ արդէն շատոնց նոյն այդ «ազգային գործիչներ» փողով փչած են. հարկաւ «ազգային շահերը»: Ցարակոյս չունինք, որ այդ խօսքը

## ՄԵՐ «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԸ»




— ՊԷՏՔ ՉԷՆ ԱՅԴ ԿՈԿՈՐԴԻԼՈՍԵԱՆ ԱՐՑՈՒՆՔ, ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ.... ԱՅԴ ՉԱՒԱԿԴ ԱՐԴԷՆ ՄԵՌԱԾ ԾՆԱՒ.... ԹՈՂ ՈՂՋ ԸԼԼԱՅ ՄԻՆՉՏ ԱՅՍ ՔՈՎԻՆԸ. ԳԻՏԵՍ ԻՆՔԴ ԹԷ ԻՆՉ ՀՆՉԻՒՆ ԱՂՈՒՈՐԻԿ ՁԱՅՆ ԼԸ ՈՒՆԻ:

մութ խօսք մ՚է, բայց արդեօք մեր «ազգային գործիչները» նոյն այդ մութ խօսքը չէ՞որ միշտ կը գործածեն և այդ կը բանզարեր որ նոքա ...... եթէ ուրիշ բան մ՚ալ կը լինէն ...... գէթ իրենց գործերնին կը շինէն.... Բայց միայն ուրիշ կերպով մը կուզենք խմբագրել մեր ուղղութիւն. մեզ պիտի առաջնորդէ միշտ վերքը ՀԱՅԱՍՏԱՆԻ: Ապա կը կարծենք թէ 19րդ դարուս մէջ այնչափ հրաշքներ էն եղած, որ նոր հրաշք մ՚ալ եղած է՝ խենթերն էն խելօքներն այժմ: Եւ ի վերջոյ մեր ապտակը պիտի միացնէ այն զէնքերի հետ, որոնցմով հայ աշխատաւոր ժողովրդեան երեսն ապագային բոլորովին պիտի ազատուի ամէն բռնաւորների, ամէն տզրուկների, ժողովրդի քրտինքով ամէն ապրողների — հայ ըլլայ, թիւրք ըլլայ — ամէն ապտակներէ»:

Վերջին խօսք մ՚ալ: Մեր ազգային ասպարիզին մէջ կան մէկ այլ տեսակ «գործիչներ» որոնց երեսը, կը հաւատացունէն մեզ, իբր ապտակի ազդեցութիւնն անզգայ էն. որո՞ւն հոգնէ, այդպիսիների կաշուէ երեսն արդէն ինքնին ապտակ մ՚է իրենց համար:

## ՍԱՍՈՒՆ

Այս տարուան «ՀՆՉԱԿ»ի 1—2 թուերուն մէջ կը կարդանք «Տարօնոյ տեղեկագիր» մը, որ ամէն տեսակէտէ արժանի է բոլոր հայերուս մեծ և լուրջ ուշադրութեան: Սասնոյ վիճակը սոսկալի է, հառաչարութեան ընթացքը գազանային, եղած դէպքերն ալ խիստ աղէկտուր և Սասունը յուսահատաբար օգնութեան կը կանչէ... Բայց հարկաւ, մեր ամէն յայտնի և անյայտ «հայրենասէրների» աղիքները աղէկ վիճակ մը ունին, փառք Աստուծոյ, և ատոնց այդ աղիքներին, վնաս մը չեն կարող հասցունել այն աղէկտուր նկարագիրները....

\+ \+ \+

Նա ծնուէրէ մօրէ մը,
Ինչպէս մենք ալ ամէնըս,
Իրկեանքն կախուած փուքէ մը,
Ունի շունչ մը, հոգի մը: Կիրակոսէ անունը,
Նորանէ՛ ջամբոտ կը կոչէն.
Նա էլեր է բաղչպան մը — գաւ ըսուած,
Աշխատաւոր մարդիկ կապած իր պաչքն,

Սուլթանյանուն մ՝ իրէն տուած,
խարազան մը ձեռքն առած՝
Ժողովուրդը կը մտրակէ մինչ արիւն,
Ըսելով „ամէն ազգէ մ՚ ձեր ամենուն":

\+ \+ \+

Ժողովուրդը կը տրքայ
Աշխատաւոր ոյժերով
Եւ արիւն փորն կը տանջայ.
Պալատ, խրախճանք, ոսկի չեղած համարքով,
Աշխատաւոր քրտինքով
Հարստութիւնն դիզուած հոկորդը հանցնի,
Մինչ ժողովուրդը փորի գոտին կը սղմի,
Զի սուլթանը պապթիէ
Ունի, ձեռքը խարազան,
Ժողովուրդը կը մտրակէ իբր գազան,
Ըսելով „կեանքդ լոկ սուլթանի համարէ":

\+ \+ \+

Տէրտէրք մէջ „հօտ" կը կոչէ,
Ըսել է թէ ոչխար ենք.
Ոչխար — անշուշտ, այնպէս չէ,
Զի սուլթանի շնորհով քիւրդը ձեռքը զէնք
Մեր ոչխարաց հետ. բարէ,
Մեր կին, աղջիկունք, մանուկ, ինչքեր կը տանի.
Մենք ալ պանդուխտ հոտած ափուսնին, Ջոջերի"
Կը պառկինք ձմեռ ու ամառ,
Անոնց համար Փարիզեան
Զբօսանքներ... և մեզ կըսեն „էհ, ինչ ձար,
„Աշխատնէրի արքայ՝ ցինեներկինւնց վրան":

\+ \+ \+

„Խենթ" կըսեն մեզ. անշուշտ „խենթ",
Զի մտրակէ հատուցանք,
Աշխատութեան յախուռն տենդ
Մեզ ալ ծանըր երկցաւ և մաշեցանք:
„Խենթ" ըսին մեզ և ձգին
Բանտ ու աքսոր, ախախաղան հանեցին....
Հատէր ինչյան... մէջ անձնիմանոնց մէ անուանուն
„Խենթ" — անշուշտ. զի երկնային
Արքայութիւն սուլթանին,
Հարուստներին կուզենք թողուլ... իսկ մեզի,
Ժողովրդեան... երկրի դրախտն ալ կը բաւի....

Խենթը.

## ՄԱՀԱԶԳՈՅԺ

Ժամանակին մեզ ուղարկուած էր հետևեալ մահազդը, զոր պարտք կը համարինք դնել „Ապտակի" մէջ:

„Ազնիւ Հայրենակից.

„Կը խնդրուի Ձեզմէ ներկայ գտնուիլ թաղման հանդիսին երբէք կայութիւն և շունչ չունեցած մարմնի կոչեցեալ „ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ", որոյ կըրած գործը մեծ էր և ըրածը.... բան մը ըրած չունի.... որպէս նաև քաղաքական թաղման հանդիսին բոլորովին չողոքացեալ ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ „ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՏՆՕՐԷՆ, խնքնակոչ-խնքնակալ նոյն „Միութեան", խմբագիր „ԱՐՄԷՆԻԱ" ազգային, քաղաքական, վիճականտական, առևտրական, յայտարարական, գոյն ու բազմագոյն, ամառ փիլիսոփայական ճշմարտութիւններ և հասկամձեւ գաղափարներէ (ինչպէս, օրինակ, գիշերէն յետոյ լոյս կըլլայ, համարակալ — համարակալ մարդս մահկանացու... մահ է „ԱՐՄԷՆԻԱ"ն և այլն). դատարկութեամբ լեցուն, ոխաօրրական, հայհոյական, „և այլն, և այլն" թերթի, որ կը հրատարակուի ի Մարսէյլ. մեծ մարդ մըը ցիւնների մէջ, մեծ հայրենասէր խաբուածներու աչքին, և այլն, և այլն, և այլն (տիտղոսները շատ են), որ սպանուեցաւ հայ ժողովրդեան արհամարհանքով և յեղափոխականների գործունէութեամբ, որոնք միշտ արժանացած են նորա հատաղի և արդար հալածման:

Հանգուցեալը նշանաւոր էր խել մը բաներով: Նա էր որ առաջին անգամ ամենէն ազդուերպով ապացոյց տուաւ թէ թերթ կը հրատարակուի „խմբագիրին" ապրուստի միջոց մը ըլլալու համար: Նա էր որ ատտամեան հրաշք մ՚ըրաւ անգոյ մարմնի մը գոյութիւն ունենալը հռչակելով և մինակ մէկ անց ըլլալով՝ իրմով այդ մարմինը կը ներկայացունէր, փարա կը ժողուէր: Իբրև „Ընդհանուր-Տնօրէն" — շատ արդիւնաւոր գործունէութիւն մը ունեցաւ — աղոր ապացոյց իր „Միութեան" չըրած գործերը, որ մեծ էին:

„Կը խնդրուի հանգուցեալի եղած չեղած բարեկամները բարեհաճին գալ իրեն, հանգուցեալի, տունը, ուր կը գտնուի նորա դագաղը, և հանգուցեալի համբերութեան չափ շատ արցունք թափէն մաքրելու և լուալու համար հանգուցեալի խիղճը:

Հանգուցեալի բարեկամներ՝

Մ. Զ., Ա. Ա., ԱՆՆԻԲԱԼ. „ԱՐՄԷՆԻԱ" խմբագրատուն:

## ՄԵՐ „ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԸ"



Մ. Զ. — „Խոնարհաբար կը խնդրեմ մատուցէք զայս աղերսագիր մեծանուն հայաստանին...."....

ՔԱՐՏՈՒՂԱՐ. — Մեծանունն այլ ևս խուլ և կոյր է.....

Մ. Զ. — Այժմ իրապէս.... բայց բան մը չէ. ես գիտէի որ նա առաջ ալ միշտ խուլ և կոյր էր հայոց գործերի համար, սակայն դարձեալ յանձնեցէք այս թուղթն իրեն. կուզեմ ազգիս առջև „ԿԱՐԵՒՈՐ ՀԱՍՏԱՐԱԿ" ըլլալ, ինչպէս միշտ.....

ՔԱՐՏՈՒՂ. — ???!!

